ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Սովորողի ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային պայմաններից է**

1. Խիստ կարգապահությունը
2. Դասընկերոջ ախատանքի օրինակը
3. Հուզազգայական մթնոլորտը
4. Արտադասարանական պարապմունքը

2 **Որ արվեստագետն է համարվում Վաղ վերածնդի ժամանակաշրջանի ներկայացուցիչ**

1. Ջոտտո դի Բոնդոնե
2. Սանդրո Բոտիչելլի
3. Լեոնարդո դա Վինչի
4. Պաոլո Վերոնեզե

3 **Մանկավարժական փորձը վերաբերում է**

1. Դիդակտիկ սկզբունքներին
2. Հետազոտության մեթոդներին
3. Ուսումնական նպատակներին
4. Չափորոշիչային պահանջներին

4 **Ֆրանսիացի որ նկարիչը համարվեց կետանկարչության (պուանտելիզմ) հիմնադիրը**

1. Կլոդ Մոնե
2. Էդգար Դեգա
3. Ժորժ Սյորա
4. Մորիս Դենի

5 **Հովնաթանյան նկարչական գերդաստանի որ ներկայացուցիչն է պատկերել Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը**

1. Նաղաշ Հովնաթան (1661-1722)
2. Հովնաթան Հովնաթանյան (1725-1799)
3. Աղաթոն Հովնաթանյան (1816-1893)
4. Հակոբ Հովնաթանյան (1806-1881)

6 **Կերպարվեստի հիմնական արտահայտչամիջոց են հանդիսանում**

1. Գուաշը, մատիտը, պաստելը
2. Գիծը, կետը, գույնը
3. Համաչափությունը, կառուցվածքը
4. Հեռանկարը, կրճատումը

7 **Որն է համարվում թեմատիկ հորինվածքի հիմնական տարր**

1. Աշխատանքի չափը
2. Աշխատանքային նյութը
3. Աշխատանքի կոմպոզիցիան
4. Աշխատանքի կոլորիտը

8 **Նշվածներից հայկական որ եկեղեցին է համարվում բազիլիկ**

1. Կարմրավոր
2. Խորանաշատ
3. Զվարթնոց
4. Տեկոր

9 **Որն է համարվում Երևանի առաջին արձանը**

1. Խաչատուր Աբովյան
2. Ղուկաս Ղուկասյան
3. Ստեփան Շահումյան
4. Ներսոն Ստեփանյան

10 **Ով է Երևան քաղաքի առաջին արձանի հեղինակը**

1. Հովհաննես Բեջանյան
2. Այծեմիկ Ուրարտու
3. Անդրեաս Տեր-Մարուքյան
4. Սերգեյ Մերկուրով

11 **Ով է առաջին անգամ շրջանառության մեջ դրել Հելլենիզմ տերմինը**

1. Բորիս Պիոտրովսկի
2. Յոհան Դրոյզեր
3. Ջորջո Վազարի
4. Ալեքսանդր Մակեդոնացի

12 **Նշվածներից ով է եղել Պոլսի գեղարվեստի ուսումնարանի հիմնադիրներից և նույն ուսումնարանի քանդակի բաժնի ղեկավարը**

1. Հովսեփ Մանաս
2. Երվանդ Ոսկան
3. Հովսեփ Փուշման
4. Էդգար Շահին

13 **Ով է հանդիսանում նոր շրջանի հայ կերպարվեստում պատմական ժանրի հիմնադիրը**

1. Փանոս Թերլեմեզյան
2. Վարդգես Սուրենյանց
3. Եղիշե Թադևոսյան
4. Գևորգ Բաշինջաղյան

14 **Որտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Քաոս» ստեղծագործությունը**

1. Հայաստանի ազգային պատկերասրահ
2. Դրեզդենի պատկերասրահ
3. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահ
4. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահ

15 **Ով է եղել Գեղարվեստի ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) հիմնադիրը**

1. Մարտիրոս Սարյան
2. Ասքանազ Մռավյան
3. Արա Սարգսյան
4. Ալեքսանդր Մյասնիկյան

16 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների համակարգ չէ**

1. Գիտելիքների համակարգ
2. Կարողությունների համակարգ
3. Արժեքային համակարգ
4. Բովանդակային համակարգ

17 **Հելլենիստական շրջանում որ աստծուն է նվիրված եղել Գառնու հեթանոսական տաճարը**

1. Արամազդ
2. Վահագն
3. Միհր
4. Խալդի

18 **Նշվածներից որը չի համարվում հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացի փուլ**

1. Տարրական
2. Միջին
3. Կրտսեր
4. Ավագ

19 **Որ աստծուն է նվիրված եղել ուրարտական Մուսասիրի տաճարը**

1. Խալդի
2. Թեյշեբա
3. Շիվինի
4. Տուրանի

20 **Ով է եղել Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի հեղինակը**

1. Հակոբ Կոջոյան և Ալեքսանդր Թամանյան
2. Մարտիրոս Սարյան և Հակոբ Գյուրջյան
3. Դմիտրի Մերկուրով և Արա Սարգսյան
4. Փանոս Թերլեմեզյան և Նիկողայոս Մառ

21 **Կերպարվեստ առարկայի ծրագրի տվյալ բաժինն ապահովում է գեղարվեստական արտահայտչական միջոցների ընդհանրացված ըմբռնման ձևավորում**

1. Գեղարվեստական պատկերման յուրահատկություններ
2. Արվեստի կոնստրուկտիվ տեսակներ և միջոցներ
3. Միջմշակութային հաղորդակցության հմտություններ
4. Իրականության ստեղծագործական վերարտադրություն

22 **Ինչպիսի հիմնական հմտություններ և կարողություններ են ձևավորվում խմբային աշխատանքի ժամանակ**

1. Տարածության արտահայտման հմտություններ
2. Հեռանկարային ընկալման հմտություններ
3. Համագործակցային աշխատանքի հմտություններ
4. Ստեղծագործական երևակայության հմտություններ

23 **Ում նկարազարդումներով է հրատարակվել հայկական առաջին տպագիր Աստվածաշունչը**

1. Ալբրեխտ Դյուրեր
2. Էժեն Դելակրուա
3. Շառլ Դյուպուի
4. Սանդրո Բոտիչելլի

24 **Հայ արվեստագետներից ով է հանդիսանում իմպրեսիոնիստ նկարիչ**

1. Ստեփանոս Ներսիսյան
2. Եղիշե Թադևոսյան
3. Մինաս Ավետիսյան
4. Ենոք Նազարյան

25 **Հանրակրթական դպրոցում որը չի հանդիսանում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Պատկերում բնօրինակից
2. Թեմատիկ նկարչություն
3. Արվեստի տեսություն
4. Դիզայնի պատմություն

26 **Որտեղից է ծագել գոբելեն անվանումը**

1. Գոբելեն ազգանունից
2. Գոբելեն բնակավայրից
3. Գոբելեն թելատեսակից
4. Գոբելեն գույնից

27 **Ինչու են XVII դարի Հոլոնդիայի արվեստագետներին կոչել «Փոքր հոլանդացիներ»**

1. Կարճահասակ լինելու համար
2. Փոքրաչափ նկարներ ստեղծելու համար
3. Սակավաթիվ նկարներ ստեղծելու համար
4. Փոքր բնակավայրերում ապրելու համար

28 **Հունական ճարտարապետության մեջ որ կերպարներն էին կոչվում Ատլանտներ**

1. Տղամարդկանց այն արձանները, որոնք ունեին առնական կառուցվածք և զարդարում էին շինության տարածքը
2. Այն արձանները, որոնք զարդարում էին պալատների նախասրահները, և հանդիսանում էին որպես հունական դիցարանի տարբեր աստվածների կերպարներ
3. Տղամարդկանց այն արձանները, որոնք բերվում էին հռոմեական կայսրությունից և տեղադրվում հունական ճարտարապետական կոթողներում՝ վերջինիս տալով հունահռոմեական ճարտարապետական ոճ
4. Տղամարդկանց այն արձանները, որոնք տեղադրվում էին սյուների փոխարեն և պահում էին շինության ծածկը, պատշգամբը, սյունասրահը

29 **Կերպարվեստի որ տեսակին է պատկանում լինոփորագրությունը**

1. Հարթաքանդակ
2. Գրաֆիկա
3. Խճանկար
4. Կոլաժ

30 **Կերպարվեստ առարկայից ներկայացվող պահանջների համակարգը բաղկացած է**

1. 2 բաժնից
2. 4 բաժնից
3. 6 բաժնից
4. 8 բաժնից

31 **Հայազգի որ ճարտարապետն է վերականգնել Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) Սբ. Սոֆիայի տաճարի գմբեթը**

1. Մանուել
2. Մոմիկ
3. Դանիել
4. Տրդատ

32 **Որ ժամանակաշրջանի արվեստին է բնորոշ քրիստոնեական թեմաները**

1. Ռոկոկո
2. Իմպրեսիոնիզմ
3. Վերածնունդ
4. Անտիկ

33 **Ինչ է նշանակում «սֆումատո» տերմինը**

1. Պատկերային ձևերի առանձնահատուկ որակ, մոդելավորման փափկություն, տոնային և ուրվագծերի նուրբ անցումներ, անորոշության, մշուշանման և թափանցիկության տպավորություն
2. Մարդու և բնության կապը ու փոխհարաբերությունը կերպարվեստում
3. Մարդկային դիմանկարի հոգեբանական արտահայտությունը կերպարվեստում
4. Աստվածաշնչյան թեմաների պատկերազարդումը միջնադարյան եկեղեցիներում և ձեռագիր մատյաններում

34 **Որ արվեստագետը չի համարվում սյուրռեալիզմի ներկայացուցիչ**

1. Ռենե Մագրիտ
2. Անդրե Բրետոն
3. Մաքս Էռնստ
4. Գուստավ Կլիմտ

35 **Որտեղ է գտնվում Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» աշխատանքը**

1. Վատիկանի քրիստոնեական թանգարան
2. Ֆլորենցիայի Պալացցո Վեկկիո
3. Միլանի Սանտա Մարիա դելլե Գրացիե տաճար
4. Ֆլորենցիայի Պալացցո Մեդիչի-Ռիկկարդի

36 **ԽԻԿ համակարգը կիրառվում է**

1. Դասի պլան կոնսպեկտ կազմելիս
2. Տարվա օրացուցային պլան կազմելիս
3. Գնահատման չափանիշներ կազմելիս
4. Ամփոփիչ հաշվետվություն կազմելիս

37 **Պատկերում որոշակի կոլորիտի ստեղծումն ապահովվում է**

1. Լրացուցիչ գույների ներդաշնակությամբ
2. Գուներանգային հակադրությունների առկայությամբ
3. Երանգի նկատմամբ գույնի գերակշռությամբ
4. Միմյանց փոխլրացնող գույների շեշտադրմամբ

38 **Որոնք են ծիածանի գույները**

1. Կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն
2. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագուն, մանուշակագույն, փիրուզագույն
3. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, սպիտակ
4. Կարմիր, դեղին, գազարագույն, մանուշակագույն, կանաչ, կապույտ, մոխրագույն

39 **Կերպարվեստի դասավանդման առաջատար սկզբունք է համարվում**

1. Ճնոողականությունը
2. Օպտիմալացումը
3. Նորարարությունը
4. Փորձարարությունը

40 **Ինչպես է անվանվում գեղանկարչական այն ժանրը, որտեղ նատյուրմորտում բացի տվյալ ժանրին բնորոշ առարկաներից, պատկերված են լինում զանգ, գրքեր, սպանված թռչուններ**

1. Պանո
2. Վանիտաս
3. Դիպտիխ
4. Բազիլիկ

41 **Աշխատանքի գրագետ վերլուծության համար առաջնահերթ ինչպիսի կարողություններ պետք է զարգացնել**

1. Տեսողական ընկալում
2. Վերլուծական մտածողություն
3. Հաղորդակցական կարողություն
4. Հուզազգայական արտահայտում

42 **Ինչպես են միջազգային տերմինով թարգմանաբար կոչվում մարտանկարիչները**

1. Բատալիստ
2. Ֆովիստ
3. Տաշիստ
4. Դադաիստ

43 **Ով է Երևանի Խ. Աբովյանի անվան պուրակում տեղադրված Խ. Աբովյանի հուշարձանի հեղինակը**

1. Արա Հարությունյան
2. Գետիկ Բաղդասարյան
3. Յուրա Մինասյան
4. Սուրեն Ստեփանյան

44 **Ինչպես է անվանվում կենցաղային իրերի, թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կերպարվեստում**

1. Էստամպ
2. Կոլաժ
3. Օֆորտ
4. Մոնոտիպիա

45 **Ով է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի նկարազարդման հեղինակը (1963-1965 թթ.)**

1. Գրիգոր Խանջյան
2. Հակոբ Կոջոյան
3. Մինաս Ավետիսյան
4. Լևոն Մանասերյան

46 **Նշվածներից որն է համարվում ուսումնական խնդիր**

1. Բնօրինակից նկարչություն
2. Տարածության արտահայտում
3. Կարողությունների ձևավորում
4. Երևակայության զարգացում

47 **Ով է «Մտածողը» բրոնզաձույլ ստեղծագործության հեղինակը**

1. Էմիլ Բուրդել
2. Օգյուստ Ռոդեն
3. Ժան Կարպո
4. Արիստիդ Մայոլ

48 **Աշակերտների մոտ կերպարվեստային գործունեության ինչպիսի ընդունակությունների զարգացումն է ապահովում ինքնուրույն ստեղծագործական գործունեություն**

1. Ստեղծագործական ընկալում
2. Գեղագիտական պահանջմունք
3. Զննողական վերաբերմունք
4. Իրապաշտական վերարտադրություն

49 **Ով է Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը**

1. Արա Սարգսյան
2. Ղուկաս Չուբարյան
3. Արշամ Շահինան
4. Տարիել Հակոբյան

50 **Առաջադրանքներ կազմելիս որը չի համարվում կարևորագույն գործոն**

1. Առաջադրանքի չափ
2. Առաջադրանքի խնդիր
3. Առաջադրանքի տեսակ
4. Առաջադրանքի թեմա

51 **Որ ճարտարապետն է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի հեղինակը**

1. Թորոս Թորամանյան
2. Մարկ Գրիգորյան
3. Արթուր Մեսչյան
4. Ռաֆայել Իսրայելյան

52 **Կերպարվեստի դասավանդման գործընթացում մանկավարժի գործնական ցուցադրումը օգնում է**

1. Աշակերտներին սովորեցնել ճաշակ
2. Աշակերտներին ցուցադրել մեթոդները
3. Աշակերտներին ուղղորդել ընդօրինակել
4. Աշակերտներին զերծ պահել սխալներից

53 **Ով է հին հունական դիցաբանության պանթեոնի օվկիանոսների աստվածը, ում նաև անվանում էին «Ծովի Աստված»**

1. Զևս
2. Հերմես
3. Ապոլլոն
4. Պոսեյդոն

54 **Ըստ առարկայական չափորոշչի և ծրագրի, նշվածներից որը ուսումնական գործընթացի տեսակ չէ**

1. Խմբային գործունեություն
2. Անհատական գործունեություն
3. Պատկերագրական գործունեություն
4. Խաղային գործունեություն

55 **Որ գեղանկարչի վրձնին է պատկանում «Իվան Ահեղն ու նրա որդի Իվանը» կտավը:**

1. Վալենտին Սերով
2. Վասիլի Պոլենով
3. Իսահակ Լեվիտան
4. Իլյա Ռեպին

56 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների մակարդակ չէ**

1. Նվազագույն մակարդակ
2. Միջին մակարդակ
3. Հիմնական մակարդակ
4. Առավելագույն մակարդակ

57 **Որ դարի աշխատանք է համարվում Գառնու տարածքի բաղնիքի խճանկար Հատակը**

1. 1-ին դար
2. 2-րդ դար
3. 3-րդ դար
4. 4-րդ դար

58 **Ուսումնական նյութի ուսումնասիրությունը սովորողների համար հնարավորություն կընձեռի**

1. Ինքնուրույն արտահայտել չափորոշիչային վերջնարդյունքները
2. Զարգացնել ինքնուրույն գործունեություն իրականացնելու կարողությունները
3. Ինքնուրույն կազմակերպել սեփական ուսումնական գործընթացը
4. Ձևավորել գիտելիքները ինքնուրույն կիրառելու մոտեցումներ

59 **Որն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը**

1. Տեղեկատվության այլընտրանքային աղբյուր
2. Աշակերտների գիտելիքների ստուգում
3. Ուսումնառությունը պլանավորելու գործոն
4. Երևակայական մտածելակերպի զարգացում

60 **Որը չի համարվում ուսումնական գործընթացի պարտադիր պլանավորման գործոն**

1. Տարվա օրացուցային պլան
2. Դասի պլան կոնսպեկտ
3. Առարկայական ծրագիր
4. Արտադպրոցական պարապունքներ

61 **Որը չի հանդիսանում պուրակներում տեղադրված քանդակների նպատակ**

1. Ճանաչողական
2. Գեղագիտական
3. Դաստիարակչական
4. Կիրառական

62 **Որն է համարվում Մարտիրոս Սարյանի առաջին շրջանը**

1. Արևելյան տեսարաններ
2. Երազներ և հեքիաթներ
3. Հայկական բնաշխարհ
4. Վերացական պատկերներ

63 **Հանրակրթական դպրոցում նշվածներից որն է համարվում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Կարողությունների ձևավորում
2. Տարածության արտահայտում
3. Բնօրինակից նկարչություն
4. Երևակայության զարգացում

64 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին ըստ իրենց գեղանկարչական ուղղությունների**

1. Ժորժ Սյորա
2. Պոլ Սեզան
3. Անրի Մատիս
4. Վինսենթ վան Գոգ

Էքսպրեսիոնիզմ ☐
Պուանտելիզմ ☐
Կուբիզմ ☐
Ֆովիզմ ☐

65 **Նշված տերմինները համապատասխանեցրեք իրենց բնութագրերին**

1. Ռեֆլեքս
2. Գրիզայլ
3. Պլեներ
4. Էսքիզ

Գեղարվեստական ստեղծագործության նախանկար ☐
Առարկայի վրա լույսի անդրադարձում ☐
Բացօթյա նկարչություն ☐
Մեկ գույնի տարբեր երանգներով կատարված աշխատանք ☐

66 **Համապատասխանացնել հեղինակներին ըստ իրենց հիմնադրած ժանրերի հայ կերպարվեստում**

1. Վարդգես Սուրենյանց
2. Հակոբ Հովնաթանյան
3. Գևորգ Բաշինջաղյան
4. Զաքար Զաքարյան

Դիմանկարի ժանր ☐
Նատյուրմորտի ժանր ☐
Բնանկարի ժանր ☐
Պատմական ժանր ☐

67 **Որ հայ նկարչի կեղծանունն է համապատասխանում նշված անուն ազգանունների**

1. Ոստանիկ Ադոյան
2. Գառնիկ Զուլումյան
3. Հովհաննես Սեմերջյան
4. Գևորգ Գրիգորյան

Զոտտո ☐
Արշիլ Գորկի ☐
Ժանսեմ ☐
Գառզու ☐

68 **Գտնել համընկումները**

1. Գունավոր, թափանցիկ ապակու կտորներով հորինվածք
2. Ձեռքով գործված ստեղծագործություն
3. Գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն
4. Գունավոր քարերով պատկերված ստեղծագործություն

Վիտրաժ ☐
Բատիկ ☐
Խճանկար ☐
Գոբելեն ☐

69 **Համապատասխանեցնել գրքերի նկարազարդման հեղինակներին ըստ իրենց աշխատանքների:**

1. Արա Բեքարյան
2. Հակոբ Կոջոյան
3. Մարտիրոս Սարյան
4. Գրիգոր Խանջյան

Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի» ☐
Եղիշե Չարենց «Երկիր Նաիրի» ☐
Ստեփան Զորյան «Հազարան բլբուլ» ☐
Ավետիք Իսահակյան «Աբու-լալա Մահարի» ☐

70 **Համապատասխանեցնել վերածնունդի շրջանի ստեղծագործությունները ըստ իրենց գտնվելու վայրի**

1. Ռաֆայել Սանտի «Սիքստինյան Տիրամայր»
2. Լեոնարդո դա Վինչի «Տիրամայր Լիտտա»
3. Միքելանջելո Բուոնարոտի «Դավիթ»
4. Սանդրո Բոտիչելլի «Գարուն»

Դրեզդենի հին վարպետների պատկերասրահ ☐
Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժ թանգարան ☐
Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա ☐
Ֆլորենցիայի Ուֆֆիցի պատկերասրահ ☐